ձայն է տալիս: Ոչ մի պատասխան: Դուրս է գալիս տաճարից, կանչում է նորից ու իր ձայնի մենակութիւնից սարսափած՝ ընկնում է սար ու ձոր, մօտենում է անդնդին, մի սխալ քայլ – ու գլորւում է ներքեւ:

Շատ չանցած վերադառնում է կինը, նա հոգեկան լաւ տրամադրութեան մէջ է, ըստ երեւոյթին: Վազում է արահետով վեր, մարդուն ձայն տալով: Խորին լռութիւն. շտապում է տաճար – ոչ ոք:

Եղածը գուշակելով՝ սարսափահար սկսում է հեկեկալ, ողբալ ու ձեռքերը կոտրատել: Տախտակների դղրդիւնը էլ բաւական չի համարւում նրա վիշտը շեշտելու համար, բեմի ետեւից լսւում են ճիչ, ոռնոց, հաջոց. այդ բոլորը ձուլւած իրար՝ մի վայրենի ժխոր է կազմում:

Նրա սուգի միջոցին երեւում է նորից գայթակղիչը եւ քաղցր խօսքերով գրաւել է ուզում: Տեսնելով, որ խօսքերը հերիք չեն, վճռում է ոյժի դիմել: Այն ժամանակ կինը, իր պատիւը պաշտպանելու համար, հետեւում է իր ամուսնուն եւ նետւում է ժայռից ցած:

Շատ հետաքրքրական է գայթակղիչի վերջը. ամեն կողմից նրա վրա են թափւում թաւամազ դեւերը եւ քաշ են տալիս, տանում, երեւի դժոխք:

Ճապոնական դերասանի արտաքինը խիստ յիշեցնում է ինձ հին յունականը. այս տեղ էլ դերասանի գրիմից իսկոյն կարելի է որոշել նրա դերն ու բնաւորութիւնը, թէև դիմակ չկայ: Կատակերգուի բերնի անկիւնները դարձած են դէպի վեր. դէմքը գաջի պէս սպիտակ է, մի լայն ու մշտական ժպիտով:

Ողբերգուի դէմքը, ընդհակառակը, տրագիկ է միշտ, կարծես մի ողբերգական սարսափի վայրկեանին սառել է ու